Մանրամասն տեղեկատվություն հայտարարության վերաբերյալ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)
ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՐՔԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՎԱՐԿ No. 8495-AM
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐԱԿԻ ԵՎ ԳՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ (ՈԳՀԸ)
ՀՂՈՒՄ No. ETNIP-YTPC-CS-2/2015
ՆԱԽԱԳԾԻ ՆՀ (ID) No. P146199
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ

Սույն հետաքրքրություն արտահայտելու հրավերը առաջնորդվում է սույն նախագծի գնումների մասին ընդհանուր ծանուցմամբ, որը հրապարակվել է UN Development Business online-ում 2013թ. նոյեմբերի 15-ին և www.gnumner.am (www.procurement.am) ինտերնետային կայքում:

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից (ՎԶՄԲ) ստացել է ֆինանսավորում «Էլեկտրահաղորդման Ցանցի Բարելավում» ծրագրի համար և նպատակ ունի օգտագործել ֆինանսական միջոցների մի մասը խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար:

Հայաստանի Հանրապետությունը կարևորում է 450-500 ՄՎտ հզորությամբ նոր համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (ՀՇԳՑԷ) անհրաժեշտությունը՝ երկրում համապատասխան էլեկտրամատակարարումը ապահովելու համար: Ծրագիրը համահունչ է երկրում էլեկտրաէներգիայի արտադրությունն ապահովելու նպատակով մասնավոր սեկտորի հետ համագործակցելու ՀՀ Կառավարության ռազմավարության հետ:

Հայաստանի Հանրապետությունը ցանկանում է իրականացնել ծրագիրը մասնավոր սեկտորի ներգրավմամբ, օգտագործելով մասնավոր ֆինանսական միջոցներ, հաշվի առնելով որոշակի ռիսկեր և պահանջվող մեղմացումներ, ինչպես նաև օգտագործելով վարկային ամրապնդումները, որոնք անհրաժեշտ կլինեն ֆինանսավորումը օպտիմիզացնելու և ծրագրի տնտեսական գործոնները բարելավելու համար:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը մտադիր է ձեռք բերել գործարքների մասով փորձառու խորհրդատուի ծառայություններ, որը կաջակցի ծրագրի տեխնիկա-տնտեսական հիմնավորման իրականացմանը, մասնավոր ներդրողի ընտրության համար մրցութային փաստաթղթերի նախապատրաստմանը, կաջակցի մասնավոր ներդրողի ընտրմանը, մրցութային հայտերի գնահատմանը, ինչպես նաև ընտրված ծրագրի ֆինանսական կառուցվածքի իրականացմանը, այդ թվում ծրագրի համաձայնագրերի և ֆինանսավորման ամփոփման նախապատրաստմանը: Գործարքների մասով խորհրդատուն պետք է տրամադրի անհրաժեշտ տեխնիկական, իրավական, առևտրային և ֆինանսական խորհրդատվական աջակցություն մասնավոր գործընկերոջ ընտրության համար:

Աշխատանքի ծավալը կազմված է հետևյալ չորս Փուլերից և կներառի աջակցություն ՀՀ Կառավարությանը հետևյալ կերպով՝

**Փուլ 1 Ծրագրի տեխնիկա-տնտեսական հիմնավորում**

Ծրագրի անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացում, տվյալների դիտարկում, ծրագրի տեխնիկական, առևտրային և ֆինանսական վերլուծություն, պոտենցիալ մասնավոր ֆինանսական կառույցների ներգրավմամբ ծրագրի ֆինանսական մոդելի նախապատրաստում, տեխնիկա-տնտեսական հիմնավորման հաշվետվությունը ներկայացնելու նպատակով խորհրդակցության կազմակերպում և անցկացում:

Փուլ 2 Մրցույթի ընթացքը
Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթի նախապատրաստում և թողարկում, նախամրցութային քննարկումների կազմակերպում և անցկացում, պոտենցիալ ներդրողների նախաորակավորում, մրցույթի ընթացքի կազմակերպում և կառավարում:

Փուլ 3 Գնումներ
Մրցութային հայտերի տեխնիկական առավելությունների և մրցույթի պահանջներին համապատասխանության գնահատում, սակագնի գնահատում, հայտերի վերաբերյալ խորհրդատվություն, ծանուցում ընտրված կողմին:

Փուլ 4 Ծրագրի համաձայնագրեր և բանակցություններ
Ծրագրային բանակցությունների կազմակերպում և պլանավորում; ներդրողի ներկայացրած ծրագրի ֆինանսական մոդելի վերլուծություն, աջակցություն ծրագրային բանակցությունների ընթացքում, բանակցությունների հաշվետվության/Ծրագրի համաձայնագրերի կառավարման պլանի, ամփոփիչ հաշվետվության և նպատակային ուսումնասիրություն նախապատրաստում, ինչպես նաև ֆինանսավորման ամփոփում:

Այսպիսով՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն հրավիրում է իրավասու ընկերություններին («Խորհրդատուներին») ներկայացնել իրենց հետաքրքրությունը վերոնշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ: Շահագրգիռ Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկատվություն, որը մատնանշում է, որ նրանք ունեն պահանջվող որակավորումները և համապատասխան փորձը Ծառայությունները մատուցելու համար (վերջին 10 տարվա ընթացքում միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) ֆինանսավորմամբ կատարված նմանատիպ առաջադրանքների նկարագրություններ, բրոշյուրներ, փորձառություն համանման պայմաններում և այլն):

Կարճ ցանկում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են՝

- Վերջին 10 տարիների ընթացքում ընկերության ընդհանուր փորձը տեխնիկական, իրավական, առևտրային և ֆինանսական խորհրդատվական աջակցության ոլորտում՝ էլեկտրաէներգիայի արտադրության նոր ծրագրերում և դրանցում մասնավոր սեկտորի ներգրավմամբ /առավելագույնը 20 միավոր/
- Վերջին 10 տարիների ընթացքում ընկերության հատուկ փորձը տեխնիկական, իրավական, առևտրային և ֆինանսական խորհրդատվական աջակցության ոլորտում՝ էլեկտրաէներգիայի արտադրության նոր ծրագրերում և դրանցում մասնավոր սեկտորի ներգրավմամբ /առավելագույնը 70 միավոր/
- Վերջին 10 տարիների ընթացքում ընկերության տարածաշրջանային փորձը տեխնիկական, իրավական, առևտրային և ֆինանսական խորհրդատվական աջակցության ոլորտում՝ էլեկտրաէներգիայի արտադրության նոր ծրագրերում և դրանցում մասնավոր սեկտորի ներգրավմամբ /առավելագույնը 10 միավոր/

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է 2011թ. հունվարին հրապարակված (2014թ. հուլիսին վերանայված) «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցի հոդված 1.9-ին, որտեղ սահմանված է շահերի բախման նկատմամբ Համաշխարհային բանկի դիրքորոշումը:

Որակավորումը բարձրացնելու նպատակով Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության կամ ենթախորհրդատուի ձևով:

Խորհրդատուն կընտրվի Որակի և գնի վրա հիմնված ընտրության (ՈԳՀԸ) ընթացակարգով, որը սահմանված է 2011թ. հունվարին հրապարակված (2014թ. հուլիսին վերանայված) «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցում:

Շահագրգիռ խորհրդատուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ստորև նշված հասցեով ժամը 9 : 00-ից մինչև 17 : 00 (GMT + 4 : 00):

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն (առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային փոստով) ստորև նշված հասցեով մինչև 2015թ. մայիսի 21-ը, ժամը 15 : 00 (GMT + 4 : 00):

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ Արին-Բերդի 3-րդ նրբանցք, 3
Քաղաք՝ Երևան 0053,
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Ի ուշադրություն՝ Պ-ն Հովակիմ Հովհաննիսյան, Գլխավոր տնօրեն
Հեռախոս: +374 10 472760;
Ֆաքս: +374 10 434412,
Էլեկտրոնային հասցե: mailbox@yccpp.com;